

Մ Ի Ն Կ Ա Տ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն

(Նամակ Խմբագրութեան)

Միսիթար Սերաստացու կենսագրութեան մէջ, որ տպուեց «Մուրճի» մէջ (տ. իմ «Հայոց գրականութիւնը XVIII դարում») ես փաստերով հերքել եմ այն անանգութիւնը, թէ Միսիթարը ամենևին հեռացած չէր իր մայրենի եկեղեցուց, այլ մնալով լուսաւորչական, արտաքուստ կաթօլիկ եկեղեցուն էր յարած՝ իր Միաբանութիւնը հաստատուն պահելու համար։ Ես ասել եմ որ դա առասպել է. ասել եմ որ Միսիթար Սերաստացին կաթօլիկ էր, մի բան, որ ամենևին մեղք չէ,—մի և նոյն ժամանակ հայ-կաթօլիկ, այսինքն հոգով նուիրուած իր ազգին։ Ի միջի այլոց, ես հերքել էի այն առարկութիւնը, որ բերում են մի քանիսները՝ Միսիթարի լուսաւորչական լինելը հաստատելու համար։ Դա այն է, որ Վենետիկում տպուած գրքերի վրայ նշանակում էր էջմիաձնի կաթողիկոսի անունը։ Ես ցոյց էի տուել որ Խաչատուր Կարնեցի վարդապետը, որի կաթօլիկութեան մասին ոչ մի կասկած չէ կարող լինել, նոյնպէս նշանակել է իր մի գրքի վրայ էջմիաձնի կաթողիկոսի անունը և փորձել էի բացատրել այդ հանգամանքը նրանով, որ կաթօլիկ վարդապետները զիմում էին այդ ընդունուած ձևին, որպէս զի նրանց տպագրած գրքերը տարածուեն ազգի մէջ։

Կ. Պօլսի «Բիւզանդիոն» լրագրում թիւքթահայ բանասէր պ. Դ. Խաչկոնց սկսել է տպագրել «Երկհարիւրամեակ Միսիթար Արքաճօ» աշխատութիւնը։ Նախաբանի մէջ (№ 1453) պ. Խաչկոնց ասում է թէ սխալ է իմ վերոյիշեալ տեսութիւնը, այսինքն թէ Միսիթար Սերաստացին կաթօլիկ էր ձեռնում միայն, իրապէս նա գիմնալաւորուած լուսաւորչական էր։ Որ ևս կարող եմ սխալուած լինել իմ աշխատութեան մէջ, դա շատ հեշտ կարող է պատահել։ Բայց ինձ թւում է որ պ. Խաչկոնց պիտի փաստերով հաստատէր իմ սխալը և ոչ թէ բաւականանար լոկ խօսքերով։ Ես հիմնել եմ իմ եզրակացութիւնը մի շարք պատմական փաստերի վրայ, այդ եզրակացութեան սխալը հաստատելու համար պէտք էր կամ ոչնչայնել իմ ունեցած փաստերը կամ մէջ բերել մի կամ քանի փաստեր, որոնք հաստատէին իմ սխալը։ Պ. Խաչկոնց ոչ մէկն է անում, ոչ միւսը թող ինձ ներէ, ուրեմն, պարօնը, եթէ ես ասեմ որ պատմութեան մէջ

փաստերն են խօսողը, և ես հէնց այս հիման վրայ չեմ կարող ընդունել որ ես սխալուած եմ Մխիթար Աբբայի վերաբերմամբ:

Պ. Խաչկոնց ասում է. «Իր (Մխիթարի) երկասիրութեանց մէջ կրնայ ցուցուիլ աշխատասիրութիւն մը որ մեր մէջ Հռոմադաւանութիւն տարածելու, հաւատափոխութեան փորձ մ'երած ըլլայ»: Ես ցոյց կը տամ պ. Խաչկոնցին Յակոբ պատրիարք Նալեանի «Ծրագ ճշմարտութեան» գիրքը, որ տպուած է Կ. Պօլսում 1756 թուին: Այդտեղ հայոց աստուածաբան պատրիարք երկար և տեղ-տեղ նոյն իսկ շատ խիստ բանակոխ է մղում Մխիթար Աբբայի դէմ գաւառաբանական հարցերի առիթով. այդ բանակոխը ցոյց է տալիս որ Մխիթար Աբբան քննադատել է հայոց եկեղեցու դաւանութիւններն ու ծէսերը և ցոյց է տուել նրանց սխալները կաթօլիկութեան տեսակէտից:

Շատ զարմանալի կը լինէր այս բոլորից յետոյ դեռ շարունակել հաւատալ այն անփաստ աւանդութեան, թէ Սեբաստացին հայոց եկեղեցուց չէր հեռացել, մանաւանդ թէ այդ բոլորը մի դիմակ էր նրա համար: Ի՞նչպէս է, սակայն, որ Մխիթարի ժամանակակից Նալեան պատրիարքը չը գիտէր այդ բանը և կուռում էր նրա դէմ, իբրև հայոց եկեղեցու թշնամու դէմ (տես Նալեանի առաջաբանը):

Ո՛չ, ես կրկնում եմ իմ ասածը. «Մխիթարը կաթօլիկ էր. — ոչինչ յանցանք չը կայ այս հանգամանքի մէջ»: Եւ կաթօլիկութիւնը բոլորովին արգելք չեղաւ որ այդ մեծ մարդը հայ ազգի երախտաւորը հանդիսանայ իր հիմնած Միաբանութեամբ:

ԼԷՕ

Հրատարակիչ եւ ժամանակաւոր խմբագիր՝

Կ. ԿՐԱՍՈՒՆԻԿԵԱՆ

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

«Մուրճի» յուլիսի համարում մտել են ի միջի այլոց հետեւեալ վերապակները.

Երես	տող	սպուած է	պէտք է լինի
227	6	առաջարկութիւններ	առաջարկութիւններ
246	21	= 30 ֆունտ	= 17 պուդ 29 ֆ.